

---

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՄՈՒՇ ՍՏԱՆԱԼԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Արթուր Սիրեկանի Ղամբարյան**

*Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի*

*իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,*

*ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,*

---

**Ամփոփագիր:** Սույն հոդվածում համալիր վերլուծության է ենթարկվում նմուշ ստանալու ինստիտուտի քրեադատավարական նշանակությունն ու առանձնահատկությունները՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության համատեքստում, մասնավորապես, ի թիվս այլնի, ներկայացվում է նմուշի նկարագիրը, հատկանիշներն ու տեսակները:

Հոդվածում ներկայացվում է ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով կարգավորվող հասարակական հարաբերությունների համակարգը՝ անդրադառնալով նաև փորձաքննության նմուշի և իրեղեն ապացույցի հարաբերակցության և տարանջատման առանձնահատկություններին:

Նշվածի համատեքստում հեղինակը բացահայտում է նմուշ ստանալու տեղն ու դերն ապացուցողական գործողությունների համակարգում, ինչպես նաև ներկայացնում է նմուշ ստանալու դատավարական կարգն ու դրա առանձնահատկությունները, նմուշ հանձնելու՝ վարույթի համապատասխան մասնակիցների պարտականությունն ու այն չկատարելու պարգայում վրա հասնող հետևանքները, մասնավորապես՝ հարկադրանքի գործադրմամբ նմուշ ձեռք բերելու առանձնահատկություններն ու հնարավոր ուղիները:

**Հիմնաբառեր.** նմուշ, իրեղեն ապացույց, փորձաքննություն, քննչական գործողություն, քննիչ, փորձագետ:

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգավորման առարկայի սահմանները:

Փորձաքննության համար նմուշ ստանալու (վերցնելու) հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով, որը տեղադրված է ՀՀ քր. դատ. օր-ի 32-րդ գլխում (Փորձաքննությունը): Օրենսդիրը նմուշ ստանալու նպատակ է համարել ոչ թե համեմատական հետազոտություն կատարելը (1961թ. ՀՀ քր. դատ. օր.) կամ հետազոտություն կատարելը (1998թ. ՀՀ քր. դատ. օր.)<sup>1</sup>, այլ փորձաքննություն կատարելը:

Փորձաքննության համար նմուշ ստանալու վերաբերյալ նորմերի (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի) կարգավորման առարկան հստակեցնելիս ծագում են մի շարք բարդություններ, որոնց առաջացման հիմնական պատճառն այն է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի իմաստով նմուշները չեն տարբերվում իրեղեն ապացույցներից կամ իրեղեն ապացույցի նմուշից:

ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգով նմուշ ստանալու ինստիտուտի ընկալումը հնարավորինս պարզեցնելու և դրա կարգավորման առարկան հստակեցնելու նպատակով պետք է կատարել մի քանի նախնական նկատառում:

Նախ՝ սույն աշխատանքում հստակ տարբերակվում են ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգով ստացված նմուշը և իրեղեն ապացույցը: Օրինակ՝ դեպքի վայրից ստացված փամփուշտը և փորձաքննության ներկայացված հրազենից կրակոցներ արձակելու միջոցով ստացված փամփուշտն ունեն էապես տարբեր դատավարական ծագում և նշանակություն: Դեպքի վայրից վերցված նմուշն իրեղեն ապացույց է («փամփուշտ-իրեղեն ապացույց»), իսկ երկրորդը փորձաքննության համար ստացված նմուշ է («փամփուշտ-նմուշ»): ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածը կարգավորում է ոչ թե «փամփուշտ-իրեղեն ապացույցի», այլ «փամփուշտ-նմուշի» ստացման հարաբերությունները:

---

<sup>1</sup> ՀՀ քր. դատ. օր-ի 240-րդ հոդվածում, որպես արտաշիրմում կատարելու նպատակ նշված է «հետազոտման համար նմուշներ վերցնելը», մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածում օգտագործվում է «փորձաքննության համար նմուշ ստանալ» ձևակերպումը:

Միևնույն նյութը կարող է մի դեպքում համարվել իրեղեն ապացույցի հատկանիշներ կրող օբյեկտ, մեկ այլ իրավիճակում՝ փորձաքննության համար ստացված նմուշ: Այսպես՝ դեպքի վայրում հայտնաբերված թուքն իր գտնվելու վայրի հատկանիշի շնորհիվ ձեռք է բերում իրեղեն ապացույցի հատկանիշ: Այս իրավիճակում հայտնաբերված թուքը պետք է ձեռք բերվի քննչական գործողության միջոցով: Իսկ եթե քննիչը ցանկանում է պարզել, թե դեպքի վայրում հայտնաբերված թուքը և մեղադրյալի թուքն արդյոք նույնական են, ապա պետք է մեղադրյալից ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգով ստանա թքի նմուշ, որն իրեղեն ապացույց չէ:

«Թուք-իրեղեն ապացույցի» և «թուք-նմուշի» տարբերակման բարդությունը պայմանավորված է նաև հոգեբանական գործոնով, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածում թվարկված են կոնկրետ անվանումներ ունեցող օբյեկտներ (արյուն, թուք, պարկուճ և այլն), ինչի հետևանքով այդ անվանումով օբյեկտների առնչությամբ ցանկացած հարց քննարկելիս դրանք ինքնաբերաբար նույնացվում են ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածում սահմանված համանուն նմուշների հետ: Մինչդեռ իրականում դա այդպես չէ (այս մասին հաջորդիվ):

*Երկրորդ՝* ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգավորման առարկայի մեջ ընդգրկված չեն նմուշ ստանալու այնպիսի հարաբերություններ, որոնք կազմում են կոնկրետ տեսակի փորձաքննության *իմանենտ* (ներհատուկ), *պարտադիր* (էութենական) մասը: Օրինակ՝ դիակի դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ քննիչը փորձագետին առաջադրել է նաև մահացածի արյան խումբը պարզելու հարց: Նման փորձաքննության ժամանակ դիակի արյան նմուշ ստանալը և այն հետազոտելը տվյալ տեսակի փորձագիտական հետազոտության էութենական մասն է: Այս իրավիճակում փորձագետի կողմից դիակի արյան նմուշ ստանալու հարաբերությունների նկատմամբ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածը կիրառելի չէ (այս մասին հաջորդիվ):

*1.2. Նմուշ ստանալու տեղն ապացուցողական գործողությունների համակարգում:* Դոկտրինում փորձաքննության համար նմուշ ստանալու (այսուհետև՝ նմուշ ստանալը կամ վերցնելը) տեղն ապացուցողական (քննչական) գործողությունների համակարգում եղել է վիճելի: Առկա է երեք մոտեցում՝ 1) նմուշ ստանալն ինքնուրույն քննչական գործողություն

է, 2) նմուշ ստանալը փորձաքննություն կատարելուն օժանդակող գործողություն է կամ փորձաքննության անհրաժեշտ նախապայման, 3) նմուշ ստանալը դատավարական հարկադրանքի տեսակ է<sup>2</sup>:

Փորձաքննության համար նմուշ ստանալն Օրենսդիրը վստահաբար չի համարել քննչական գործողություն, քանի որ այն նախատեսված չէ ՀՀ քր. դատ. օր-ի 208-րդ հոդվածով նախատեսված քննչական գործողությունների համակարգում: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր-ի ի 254-րդ հոդվածը, որը կարգավորում է փորձաքննության համար նմուշ ստանալու հարաբերությունները, տեղադրված է ոչ թե ՀՀ քր. դատ. օր-ի 29-րդ գլխում (Քննչական գործողությունները), այլ 32-րդ գլխում (Փորձաքննությունը): Մյուս կողմից՝ նմուշ ստանալու ընթացակարգի նկատմամբ կիրառելի է համարվել ՀՀ քր. դատ. օր-ի 28-րդ գլխի (Քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները) վերաբերելի պահանջները:

Եթե նկատի ունենանք նմուշ ստանալու մասին ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի տեղն օրենսգրքի կառուցվածքում և նմուշ ստանալու նպատակային կողմը, ապա նմուշ ստանալու մասին *նորմերը* կարելի է համարել փորձաքննության՝ որպես *իրավական ինստիտուտի* մաս: Ընդհանուր առմամբ պետք է համաձայնել այն մոտեցմանը՝ ըստ որի «նմուշ ստանալը փորձաքննության բաղկացուցիչ մաս է»<sup>3</sup>: Սակայն նմուշ ստանալը փորձաքննության (որպես ապացուցողական գործողության) բաղկացուցիչ մաս համարելու պարագայում պետք է նկատի ունենալ հետևյալ վերապահումները:

*Նախ*՝ նմուշ կարելի է ստանալ ոչ միայն փորձաքննություն կատարելու ընթացքում, այլ նաև մինչև փորձաքննություն նշանակելը՝ քննչական գործողությունների կատարման ընթացքում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն.

---

<sup>2</sup> Տե՛ս Кудрявцева А.В., Кудрявцева Ю.А., Получение образцов для сравнительного исследования в уголовном судопроизводстве России (процессуальная природа, порядок, доказательственное значение): монография. М.: Изд. Юрлитинформ, 2014. էջ 45, Исютин-Федотков Д.В., Мухин Г.Н., Получение образцов для сравнительного исследования: монография. М.: Изд. Юрлитинформ, 2014. էջ 53:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եր.: Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 380:

---

«Բացառությամբ մարդուց ստացվող նմուշների՝ քննիչը կարող է փորձաքննության համար նմուշ ստանալ նաև քննչական գործողության ընթացքում»:

---

Եթե նմուշ կարելի է ստանալ նաև մինչև փորձաքննության նշանակելը, ապա, զուտ ընթացակարգային տեսանկյունից, մինչև փորձաքննությունը նմուշ ստանալը փորձաքննության բաղկացուցիչ մաս չէ:

*Երկրորդ՝* փորձաքննություն կատարող սուբյեկտը փորձագետն է, մինչդեռ նմուշ կարող է ստանալ ոչ միայն փորձագետը (քննիչի հանձնարարությամբ), այլ նաև քննիչը (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 1-ին մաս): Եթե նմուշ կարող է ստանալ նաև քննիչը՝ մինչև փորձաքննություն կատարելը, ապա զուտ սուբյեկտային տեսանկյունից քննիչի կողմից նմուշ ստանալը չի կարող համարվել փորձաքննության բաղկացուցիչ մաս:

Հիմք ընդունելով նմուշ ստանալու նպատակային կողմը (փորձաքննություն կատարելու նպատակը)՝ պետք է այն համարել ինքնուրույն վարության գործողություն, որը նախապայման է ստեղծում փորձաքննություն կատարելու համար:

Այսպիսով՝ նմուշ ստանալը քննիչի կամ փորձագետի կողմից քննչական գործողության կամ փորձաքննության ընթացքում կատարվող առանձին վարության գործողություն է, որն իրականացվում է փորձաքննության կատարման համար նախապայմաններ ստեղծելու նպատակով:

## **2. Նմուշի բնորոշումը և դասակարգումը**

*2.1. Նմուշի բնորոշումը և հատկանիշները:* Փորձաքննության համար նմուշն օրենքով սահմանված կարգով ստացված և մարդու, դիակի, կենդանու կամ այլ օբյեկտի հատկությունները բնութագրող նյութ է, որը ձեռք է բերվում փորձաքննություն կատարելու նպատակով:

Տեսությունում նմուշներին ներկայացվում է հիմնական երեք պահանջ (հատկանիշ): Դրանք են՝ անկասկածելիությունը, ներկայացուցչականությունն ու համադրելիությունը<sup>4</sup>: Նմուշի անկասկածելիությունը նշանակում է, որ քննությամբ պետք է պարզված լինի ու որևէ կերպ կասկածի տակ չդրվի դրա ծագումն այս կամ այն օբյեկտից:

Նմուշի ներկայացուցչականություն ասելով պետք է հասկանալ դրանում նույնացվող օբյեկտի ընդհանուր և մասնավոր հատկանիշների բավարար չափով արտահայտված (ներկայացված) լինելը: Այս առումով կարևոր նշանակություն ունեն օբյեկտի քանակային և որակային չափանիշները: Քանակային առումով նմուշը պետք է բավարար լինի հետազոտություն անցկացնելու համար: Այսպես՝ ներկի թանաքի, փոշու նմուշները սովորաբար ներկայացվում են 1-50 գրամ չափով, հողի կամ շինանյութի նմուշները՝ 100-ից 1000 գրամ չափով<sup>5</sup>: Որակային առումով նմուշը պետք է ընդգրկի ստուգվող օբյեկտի բոլոր հատկանիշները: Օրինակ՝ ձեռագրի և ստորագրության նմուշները պետք է պարունակեն տվյալ անձի ձեռագրի և ստորագրության բոլոր տարբերակները, կամ պահեստարանում պահվող ցորենի նմուշները պետք է վերցվեն պահեստարանի տարբեր հատվածներից, մարդու մազերի նմուշները՝ մարմնի տարբեր հատվածներից և այլն:

Նմուշի համադրելիությունը նշանակում է, որ նմուշի ստացման մեխանիզմը և պայմանները պետք է համապատասխանեն ստուգվող հետքերի առաջացման մեխանիզմին և պայմաններին: Օրինակ՝ ձեռագրի նմուշները պետք է ստացվեն հետազոտման ենթակա տեքստը կազմելու պայմաններին մոտ պայմաններում՝ նույն տիպի թղթի վրա և նույնանման գրիչով:

*2.2. Նմուշի տեսակները և դասակարգումը:* Օրենսդիրը թվարկել է նմուշի հետևյալ տեսակները՝ 1) արյունը, սերմնահեղուկը, մազը, եղունգների կտրվածքները, մաշկի մանրադիտակային քերվածքները. 2) թուքը, քրտինքը և այլ արտաթորանքներ. 3) մաշկի գծանախշերի դրոշմը, ատամների և վերջավորությունների կաղապարները. 4) ձեռագիրը, ստորագրությունը, մարդու հմտությունն արտահայտող այլ նյութեր. 5) ձայնագրությունը.

<sup>4</sup>Տե՛ս Криминалистика. 3-е изд., перераб. и доп. Под ред. **Н.П. Яблокова**, М.: Изд. Юристъ, 2005, էջ 421, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2, Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր.: 2018, էջ 248:

<sup>5</sup> Տե՛ս Криминалистика. 3-е изд., перераб. и доп. Под ред. **Н.П. Яблокова**, М.: Изд. Юристъ, 2005. էջ 422:

6) պատրաստի արտադրանքի, հումքի, նյութերի փորձնական նմուշները. 7) զենքը, պարկուճը, գնդակը, փամփուշտը. 8) այլ նյութեր և առարկաներ (<< քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 2-րդ մաս):

Տեսությունում և գործնականում տարածված է նմուշի դասակարգումը՝ ըստ ձևավորման մեխանիզմի (ժամանակի և պայմանների): Ըստ նշված չափանիշի՝ նմուշները դասակարգվում են երեք խմբի՝ փորձարարական նմուշներ, ազատ նմուշներ, պայմանական-ազատ նմուշներ:

*Փորձարարական նմուշն* ստացվում է կոնկրետ քրեական վարույթի ընթացքում փորձաքննության կատարման համար, օրինակ՝ քննիչի կողմից ստացված ձեռագրի և ստորագրության նմուշը:

*Ազատ* նմուշը ձևավորվում է ոչ թե քրեական վարույթի կապակցությամբ, այլ, սովորաբար, մինչև վարույթ նախաձեռնելը, օրինակ՝ անձի՝ մինչև մեղադրյալի կարգավիճակ ստանալը, աշխատանքի վայրում գրած դիմումը:

*Պայմանական-ազատ նմուշը* ձևավորվում է քրեական վարույթի ընթացքում, սակայն դրա ձեռքբերման նպատակն ի սկզբանե կապված չի եղել փորձաքննության կատարման հետ, օրինակ՝ դատական ձեռագրաբանության դեպքում պայմանական-ազատ նմուշներ են տվյալ վարույթի ընթացքում մեղադրյալի գրած ցուցմունքները (հարցաքննության արձանագրությունները):

Բնական (կենսաբանական) օբյեկտները, օրինակ՝ արյունը, թուփը, քրտինքը և այլ արտաթորանքները, որոնք, որպես կանոն, ձևավորվում են քրեական վարույթից անկախ, օրգանիզմի ֆիզիկական գործունեության արդյունքում, ազատ նմուշներ են, սակայն որոշ իրավիճակներում դրանք կարող են համարվել նաև փորձարարական նմուշներ, օրինակ՝ նմուշ ստանալու վարույթային գործողության ժամանակ քննիչի հանձնարարությամբ կատարվող ֆիզիկական վարժությունների արդյունքում արտազատված քրտինքը:

Նոր օրենսդրության պայմաններում նմուշների այս ավանդական դասակարգման կապակցությամբ պետք է նշել մի շարք նկատառումներ:

*Նախ՝ փորձարարական* նմուշներ ստանալու հարաբերությունների նկատմամբ << քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածը ոչ բոլոր դեպքերում է կիրառելի: Այս հոդվածը կիրառելի չէ

փորձարարական այնպիսի նմուշ ստանալու հարաբերությունների նկատմամբ, որոնք փորձաքննության (հետազոտության) իմանենտ (ներհատուկ), պարտադիր (էութենական) մասն են: Օրինակ՝ դատաձգաբանական (բալիստիկ) փորձաքննության ժամանակ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի իմաստով նմուշ չեն այն փամփուշտը և գնդակը, որոնք ստացվել են փորձագետի կողմից փորձաքննության ներկայացված հրազենից կրակոցներ արձակելու միջոցով: Քննիչը, որոշում կայացնելով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին, իմպլիցիտ լիազորում (հանձնարարում) է փորձագետին ստանալ նաև փորձագիտական հետազոտության համար խիստ անհրաժեշտ նմուշները: Այս իրավիճակում այլևս կարիք չկա, որ քննիչը ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի հիման վրա կայացնի ևս մեկ որոշում և փորձագետին հանձնարարի ներկայացված հրազենից կրակոց արձակելու միջոցով ստանալ փամփուշտի կամ գնդակի նմուշ:

Ընթերցողին չպետք է մոլորության մեջ գցի այն հանգամանքը, որ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում որպես նմուշ թվարկված են պարկուճը, գնդակը և փամփուշտը: Վերջիններս ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի իմաստով նմուշ կարող են համարվել ոչ թե դատաձգաբանական փորձաքննության ժամանակ փորձագետի կողմից փորձարարական եղանակով ստանալու դեպքում, այլ, օրինակ, երբ դրանք ազատ նմուշներ են: Այսպես՝ *մինչև փորձաքննություն նշանակելը* քննիչը որոշում է կայացնում որևէ անձի մոտ առկա փամփուշտների հավաքածուից նմուշ ստանալու մասին, որը հետագայում ներկայացվում է փորձագետին՝ դատաձգաբանական փորձաքննության համար:

*Երկրորդ՝* ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի տեսանկյունից յուրահատուկ է միևնույն քրեական վարույթի շրջանակում պայմանական-ազատ նմուշ ստանալու հարցը: Եթե քննիչը ցանկանում է վարույթի նյութերից ստանալ նմուշ, օրինակ՝ մեղադրյալի ցուցմունքից ձեռագրի նմուշ, ապա պետք է ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգով որոշում կայացնի իր իսկ իրականացրած վարույթի նյութերից նմուշ ստանալու մասին: Կարևոր է ընդգծել, որ այս պարագայում քննիչը ձեռագրի պայմանական-ազատ նմուշն ստանում է ոչ թե մեղադրյալից, այլ վարույթի նյութերից:

Կրկին հիշեցնենք, որ ասվածը չի վերաբերում այն իրավիճակին, երբ վարույթի նյութերի ուսումնասիրությունն ինքնին համարվում է փորձաքննության (հետազոտության) իմանենտ (ներհատուկ), պարտադիր (էութենական) մասը, որի պարագայում ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածը կիրառելի չէ:

2.3. *Փորձաքննության համար ստացված նմուշը և իրեղեն ապացույցը:* ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի կարգով ստացված նմուշն արդյո՞ք համարվում է ապացույց (կամ արտավարության փաստաթուղթ), թե՞ ոչ: Պարզ թվացող այս հարցն իրականում կնճռոտ է: Խորհրդային և հետխորհրդային դատավարագիտությունն այս հարցին տվել է և տալիս է հակասական պատասխաններ: Հարցի բարդության մասին է վկայում նաև այն, որ առանձին հեղինակներ դրսևորում են իրարամերժ մոտեցումներ: Օրինակ՝ միևնույն հեղինակն աշխատանքի մի հատվածում գրում է, որ նմուշն ածանցյալ իրեղեն ապացույցի տարատեսակ է, իսկ աշխատանքի մեկ այլ մասում, երբ թվարկում է փորձագիտական հետազոտության օբյեկտները, իրեղեն ապացույցները և նմուշները ներկայացնում է տարանջատված<sup>6</sup>, որի պարագայում ծագում է բնական հարց. եթե նմուշն ածանցյալ իրեղեն ապացույցի տեսակ է, ապա փորձագիտական հետազոտության օբյեկտների համակարգում իրեղեն ապացույցը և նմուշն ինչո՞ւ են ներկայացվում որպես առանձին օբյեկտներ: Երբեմն տեսաբանները գրում են, որ նմուշներն իրենց էությամբ և իրավաբանական բնույթով չեն համարվում իրեղեն ապացույցներ, այնուհետև նշում են, որ նմուշ ստանալը քննչական գործողություն է<sup>7</sup>: Այս պարագայում ևս հարց է ծագում. եթե նմուշը քրեադատավարական ապացույց չէ, ապա նմուշ ստանալու գործողությունն ինչո՞ւ պետք է համարել ապացուցողական (քննչական) գործողություն. չէ՞ որ քննչական գործողությունը հետապնդում է ապացույց ձեռք բերելու նպատակ: Նմուշ ստանալը չի կարող համարվել քննչական գործողություն, եթե ի սկզբանե պարզ է, որ դրա արդյունքում չի ակնկալվում ձեռք բերել ապացույց:

<sup>6</sup> Տե՛ս **Орлов Ю. К.**, Современные проблемы доказывания и использования специальных знаний в уголовном судопроизводстве: научно-учебное пособие, М.: Изд. Проспект, 2016. էջ 93, 123:

<sup>7</sup> Տե՛ս **Исюгин-Федотков Д.В., Мухин Г.Н.**, Получение образцов для сравнительного исследования: монография, М.: Изд. Юрлитинформ, 2014. էջ 126:

Տարբեր են նմուշի և իրեղեն ապացույցի ծագման դատավարական ու կրիմինալիստիկական կառուցակարգերը, ինչպես նաև դրանց դատավարական նշանակությունը: Նմուշը և իրեղեն ապացույցը կրիմինալիստիկական տեսանկյունից տարբերակվում են մի շարք չափանիշներով:

1) Նմուշն անմիջականորեն կապված չէ հանցագործության դեպքի հետ, իսկ իրեղեն ապացույցը կապված է հանցագործության դեպքի և ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ:

2) Նմուշը փոխարինելի և վերարտադրելի է, իսկ իրեղեն ապացույցն անփոխարինելի և անվերարտադրելի է<sup>8</sup>:

3) Նմուշի ձևավորման գործընթացը կախված է քննիչից, իսկ իրեղեն ապացույցի ծագման գործընթացը քննիչից կախված չէ:

4) Նմուշը նույնականացման նպատակով համեմատվում է իրեղեն ապացույցի հետ, իսկ իրեղեն ապացույցը ոչ միշտ է համեմատվում նմուշի հետ<sup>9</sup>:

Հայ կրիմինալիստները ևս նշում են.

---

«Նմուշները, որոնք հատկապես ձեռք են բերվել համեմատական հետազոտման իրականացման համար, իրեղեն ապացույց չեն: Չի կարելի իրեղեն ապացույցների թվին դասել այն օբյեկտները, որոնք ծագել են մինչև հետազոտվող դեպքի տեղի ունենալը և կապված չեն դրա հետ»<sup>10</sup>:

---

<sup>8</sup> Ասվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ քննչական գործողության ընթացքն ամրագրելու, հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու նպատակով կարող են կատարվել լուսանկարում, պատրաստվել հետքերի ծեփապատճեններ և դրոշմվածքներ: Եթե իրեղեն ապացույցների լուսանկարումը, հետքերի ծեփապատճենները կամ դրոշմվածքները դիտենք որպես ածանցյալ իրեղեն ապացույց, ապա դրանք կարող են փոխարինվել (եթե պահպանվել են սկզբնական իրեղեն ապացույցի հատկանիշները):

<sup>9</sup> Տե՛ս Искотин-Федотков Д.В., Мухин Г.Н., Получение образцов для сравнительного исследования: монография. М.: Изд. Юрлитинформ, 2014. էջ 39-40:

<sup>10</sup> Տե՛ս **Ենգիբարյան Վ., Չախոյան Ա.**, Դատական փորձաքննությունների հիմնադրույթներն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր.: ՀՀ իրավաբանների միություն, 2014, էջ 337:

Քննարկվող հարցի վերաբերյալ, նախորդ օրենսդրության պայմաններում, երբ հետազոտության համար նմուշ ստանալն ինքնուրույն քննչական գործողություն էր, գրել ենք, որ հնարավոր է նմուշի և իրեղեն ապացույցի հարաբերակցության երկու իրավիճակ<sup>11</sup>:

*Տարբերակ առաջին.* նմուշ է ստացվում համեմատական հետազոտություն անցկացնելու նպատակով: Օրինակ՝ տուժողի հագուստի վրա հայտնաբերվել են արյան հետքեր: Հագուստի վրա հայտնաբերված արյունը և մեղադրյալի արյունը նույն խմբին պատկանելու հանգամանքը պարզելու և համեմատական հետազոտություն անցկացնելու նպատակով մեղադրյալից ստացվում է արյան նմուշ: Այս նպատակով ստացված արյան նմուշն ինքնին չի պարունակում իրեղեն ապացույցի հատկանիշներ, այն չի արտացոլում հանցագործության հետևանքով տեղի ունեցած փոփոխությունները, ուստի համեմատական հետազոտության նպատակով վերցված նմուշներն իրեղեն ապացույց չեն: Այս իրավիճակում ստացված արյունը (նյութը) պայմանական կանվանենք «արյուն-նմուշ»:

*Տարբերակ երկրորդ.* նմուշ է ստացվում՝ պարզելու այդ նմուշում հանցագործության հետքերի առկայությունը կամ բացակայությունը, օրինակ՝ արյան կամ մազի մեջ թմրանյութի կամ ալկոհոլի հետքերի առկայությունը: Նման հետքերի պարզմամբ կարելի է հիմնավորել ալկոհոլ օգտագործած վիճակում անձի պատասխանատվությունը կամ հանցակազմը ծանրացնող հանգամանքի առկայությունը, կամ մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելու հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում մարդուց վերցված արյունն իրեղեն ապացույց է, քանի որ դրա միջոցով կարելի է պարզել վիրուսի առկայությունը: Այս իրավիճակում ստացված արյունը (նյութը) պայմանական կանվանենք «արյուն-իրեղեն ապացույց»:

«Արյուն-նմուշի» և «արյուն-իրեղեն ապացույցի» տարբերակումն ունի գործնական նշանակություն:

*Նախ՝* տարբեր են դրանց ձեռքբերման եղանակները: «Արյուն-իրեղեն ապացույցը» ձեռք է բերվում քննչական գործողություն կատարելու միջոցով, իսկ «արյուն-նմուշը»՝ ինչպես քննչական գործողության ընթացքում, այնպես էլ ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ

---

<sup>11</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1., Հեղ. խումբ, Գիտ. խմբ. **Ա. Ղամբարյան**, 2-րդ լրամշակված հրատ., Եր.: 2017, էջ 420:

հողվածի կարգով: Ինչպես նշվեց՝ փորձաքննության համար նմուշ ստանալը (<< քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածը) այլևս քննչական գործողություն չէ և դրա արդյունքում չի ակնկալվում ապացույց ձեռք բերել, ուստի << քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված կարգը չի կարող կիրառվել, երբ ակնկալվում է ձեռք բերել, օրինակ, «արյուն-իրեղեն ապացույց» կամ «փամփուշտ-իրեղեն ապացույց»: Այս տեսակի իրեղեն ապացույցները կարելի է ձեռք բերել քննչական գործողության միջոցով, օրինակ՝ զննություն, առգրավում կամ խուզարկություն:

Առաջին հայացքից անսովոր է թվում մարդուց «արյուն-իրեղեն ապացույցը» առգրավելու մասին դատողությունը, սակայն ինչպես դեպքի վայրում կրակված «փամփուշտ-իրեղեն ապացույցը» կարելի է ստանալ առգրավման (խուզարկության) եղանակով, նույն կերպ, օրինակ, իմունային անբավարարության վիրուսով վարակելու վերաբերյալ քրեական վարույթով տուժողից կարելի է «արյուն-իրեղեն ապացույցը» ստանալ առգրավման եղանակով:

*Երկրորդ՝* տարբեր են «արյուն-նմուշ» և «արյուն-իրեղեն ապացույց» ձեռք բերելու ընթացքում թույլ տրված խախտումների ազդեցությունը դրանց հիման վրա տրված փորձագետի եզրակացության թույլատրելիության որոշման վրա:

Եթե «արյուն-իրեղեն ապացույցը» ձեռք է բերվել առգրավման կարգի էական խախտմամբ, ապա դրա հիման վրա կատարված փորձաքննության եզրակացությունն անթույլատրելի է ճանաչվում «թունավորված ծառի պտուղների» դոկտրինի հիման վրա (<< քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս պարագայում նախ՝ անթույլատրելի է ճանաչվում առգրավման կարգի էական խախտմամբ ձեռք բերված «արյուն-իրեղեն ապացույցը», այնուհետև՝ << քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա անթույլատրելի է ճանաչվում փորձագետի եզրակացությունը:

Եթե «արյուն-նմուշը» ստացվել է << քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի խախտմամբ, ապա դա պետք է համարել օրենքով նախատեսված փորձաքննության ընթացակարգի խախտում և քննարկել փորձագետի եզրակացությունը << քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի հիման վրա անթույլատրելի ճանաչելու հարցը:

Պետք է տարբերակել ոչ միայն փորձաքննության համար ստացված նմուշը և իրեղեն ապացույցը, այլ նաև նմուշը պետք է տարբերակել իրեղեն ապացույցի նմուշից: Այսպես՝ Օրենսդիրը սահմանել է, որ իրեղեն ապացույցը վարույթի նյութերի հետ պահպանելու անհնարինության դեպքերում վարույթի նյութերին հնարավորության դեպքում կցվում է տվյալ իրեղեն ապացույցի նմուշը (ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 8-րդ մաս)<sup>12</sup>: Այս պարագայում խոսքը ոչ թե փորձաքննության համար ստացված նմուշի, այլ իրեղեն ապացույցի նմուշի մասին է:

### **3. Նմուշ հանձնելու պարտականությունը և այն չկատարելու հետևանքները**

Նմուշ հանձնելու պարտականություն կրում են քրեական վարույթի հետևյալ մասնակիցները՝ ձերբակալված անձը, մեղադրյալը, տուժողը, ինչպես նաև վկան, եթե դա անհրաժեշտ է իր տված ցուցմունքն ստուգելու համար: Եթե, օրինակ, մեղադրյալը չի կատարում նմուշ հանձնելու պարտականությունը, ապա նման դեպքերում պետք է կիրառվեն դատավարական պարտականությունների հարկադիր կատարումն ապահովող կառուցակարգեր: Օրենսդիրը թերևս նման իրավիճակների համար նախատեսել է հատուկ նորմ.

---

«Ֆիզիկական հարկադրանքը, անհրաժեշտ նվազագույն միջամտության պայմանով, թույլատրելի է միայն այն անձի նկատմամբ, որը կամավոր չի կատարում իր անձնական անձեռնմխելիությանը միջամտող՝ իրավասու անձի իրավաչափ կարգադրությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածի 7-րդ մաս)»:

---

Օրենսդիրը, այս նորմը նախատեսելով, մասնակիորեն լուծել է քննչական պրակտիկայում տևական ժամանակ ծագած մեղադրյալի կողմից նմուշներ հանձնելու

---

<sup>12</sup> Օրինակ՝ եթե հողը փչացնելու հանցակազմի հատկանիշներով (ՀՀ քր. օր-ի 381-րդ հոդված) նախաձեռնված քրեական վարույթով իրեղեն ապացույց է ճանաչվել հողը, ապա հողն իր մեծածավալության կամ մեծաքանակության հետևանքով անհնարին է պահել վարույթի նյութերի հետ, ուստի ՀՀ քր. դատ. օր-ի 98-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա վարույթի նյութերին կարող է կցվել հողից վերցված նմուշը:

պարտականությունը չկատարելու խնդիրը<sup>13</sup>, սակայն դա արել է հատվածային և թերի: Օրենսդիրը չի պատասխանել այն կարևոր հարցին, թե պետական որ մարմնի վրա է դրված ֆիզիկական հարկադրանք կիրառելու պարտականությունը: Այս սկզբունքային հարցին հնարավոր է պատասխանել օրենսդրության համակարգային վերլուծության հիման վրա: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր-ի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ քննիչը հետաքննության մարմնից աջակցություն է ստանում ապացուցողական և վարության այլ գործողություններ կատարելիս: ՀՀ քր. դատ. օր-ի 256-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ փորձագետի խնդրանքով քննիչը պարտավոր է իր իրավասության սահմաններում անհրաժեշտ աջակցություն ցույց տալ փորձագետին՝ փորձաքննության բնականոն ընթացքն ապահովելու համար:

Բացի այդ, քննչական գործողության կատարման բնականոն ընթացքն ապահովելու համար քննիչն իրավասու է դրա կատարմանը ներգրավելու նաև հետաքննության մարմնի աշխատակիցների (ՀՀ քր. դատ. օր-ի 210-րդ հոդվածի 4-րդ մաս):

ՀՀ ոստիկանությունը քննիչին աջակցելու իր պարտականությունը կատարելիս կարող է գործադրել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ: Այսպես՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողներն իրավունք ունեն ոստիկանության տրամադրության տակ գտնվող հատուկ միջոցներ գործադրել՝ ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը խափանելիս **կամ նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում** (ընդգծումը՝ հեղ.): Եթե դատավարության մասնակիցը չի ենթարկվում քննիչի օրինական պահանջներին և չի կատարում իր դատավարական պարտականությունները կամ խոչընդոտում է քննչական աշխատանքի իրականացմանը, ապա ոստիկանության ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են գործադրել ռետինե մահակներ և ձեռնաշղթաներ: Նույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք

---

<sup>13</sup> Տե՛ս **Ղամբարյան Ա.**, Իրավունքից հրաժարվելը և քրեադատավարական միջամտության հարցերը, Եր.: Տիգրան Մեծ, 2018:

ունի իրավախախտների նկատմամբ գործադրելու ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը:

Հնարավոր են իրավիճակներ, երբ նմուշը հնարավոր չէ ստանալ նույնիսկ ֆիզիկական հարկադրանքի կիրառման միջոցով: Օրինակ՝ մեղադրյալը հրաժարվում է տալ ձեռագրի կամ ձայնի նմուշ: Տեսությունում պայմանական-ազատ նմուշ ստանալու եղանակ է համարվում նաև այն իրավիճակը, երբ քննիչը որևէ պատրվակով անձից ստանում է անհրաժեշտ օբյեկտը՝ առանց նրան տեղեկացնելու, որ այդ օբյեկտը վերցվում է փորձաքննություն կատարելու նպատակով (այս ճանապարհով նմուշ ստանալու թույլատրելիության մասին՝ հաջորդիվ)<sup>14</sup>: Օրինակ՝ քննիչը, հետապնդելով ձեռագրի նմուշ ստանալու թաքնված նպատակ, մեղադրյալին առաջարկում է գրել որևէ բովանդակությամբ միջնորդություն, որի արդյունքում մեղադրյալից փաստացի ստանում է ձեռագրի նմուշ: Այս պարագայում միջնորդություն գրելու առաջարկի իրական նպատակը ոչ թե ինչ-որ դատավարական հարց լուծելն է, այլ ձեռագրի նմուշ ստանալն է՝ փորձաքննության ընթացքում օգտագործելու համար: Հարց է ծագում, թե քննիչն այս եղանակով նմուշ ստանալիս արդյո՞ք չի խախտում ՀՀ քր. դատ. օր-ի 18-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված այն նորմը՝ ըստ որի արգելվում է անձից տեղեկություններ ստանալ խաբեության միջոցով:

Քննիչի՝ վերը նկարագրված վարքագիծը ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի (Փորձաքննության համար նմուշ ստանալը) տեսանկյունից անընդունելի է: Բանն այն է, որ է ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածում սահմանված է նմուշ ստանալու այնպիսի դատավարական կարգ, որի պայմաններում հնարավոր չէ անձից նմուշ ստանալ՝ առանց նրան նախապես տեղեկացնելու նմուշ ստանալու նպատակի մասին: Այսպես՝ նշված հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ քննիչը կայացնում է փորձաքննության համար նմուշ ստանալու մասին որոշումը, որում պետք է նշվի (...) նմուշն ստանալու նպատակը:

---

<sup>14</sup> Տե՛ս **Орлов Ю. К.**, Современные проблемы доказывания и использования специальных знаний в уголовном судопроизводстве: научно-учебное пособие, М.: Изд. Проспект, 2016. էջ 94:

Ի տարբերություն ՌԴ դատական պրակտիկայի<sup>15</sup> ՀՀ-ում ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի տեսանկյունից անթույլատրելի կհամարվի պայմանական-ազատ նմուշ ստանալու հետևյալ իրավիճակը. մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը դռնբաց դատական նիստում քննելու ժամանակ նիստին մասնակցող քննիչը՝ որպես մեղադրանքի կողմ, դատարանի թույլտվությամբ և մեղադրյալի համաձայնությամբ ձայնագրում է դատական նիստի ընթացքը (ՀՀ քր. դատ. օր-ի 267-րդ հոդվածի 1-ին մաս)՝ առանց մեղադրյալին կամ դատարանին տեղեկացնելու, որ ձայնագրության իրական նպատակն այն որպես նմուշ ֆոնոսկոպիական փորձաքննության ներկայացնելն է: Այնուհետև քննիչն այդ ձայնագրությունը (ձայնի նմուշը) ներկայացնում է որպես ֆոնոսկոպիական փորձաքննություն կատարելու համար ստացված նյութ: Նման վարքագիծը կհակասի ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածին, քանի որ եթե քննիչը ցանկանում է նմուշ ստանալ, ապա նա պարտավոր է այդ նպատակով կայացնել որոշում, մինչդեռ նկարագրված իրավիճակում քննիչն ըստ էության շրջանցել է փորձաքննության համար նմուշ ստանալու դատավարական կարգը:

#### **4. Նմուշ ստանալու դատավարական կարգը**

*4.1. Նմուշ ստանալու դատավարական կարգի տարբերակումը:* Վերը նշվածից պարզ է դառնում, որ քրեական դատավարությունում նմուշներ կարելի է ստանալ ոչ միայն ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված կարգով, այլ նաև բուն փորձաքննության ընթացքում կամ այլ քննչական գործողությունների ժամանակ: Ուստի ըստ ստացման եղանակի՝ կարելի է առանձնացնել նմուշ ստանալու հետևյալ եղանակները՝

- 1) հատուկ այդ նպատակով իրականացվող վարության գործողության կատարմամբ (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդված),
- 2) այլ քննչական գործողության ընթացքում (բացառությամբ մարդուց ստացվող նմուշների),

<sup>15</sup> Ст'я Бюллетень Верховного Суда РФ, 2012, № 9, էջ 4-45:

3) փորձագիտական հետազոտության ընթացքում (երբ նմուշառումը ներհատուկ է այդ հետազոտությանը և կազմում է դրա էության մասը):

Նմուշ ստանալու այս եղանակների դատավարական ձևերը տարբեր են: Նմուշ ստանալու ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված կարգը կիրառելի է միայն այն դեպքում, երբ նմուշը պետք է ստացվի այդ նպատակով նախատեսված վարության գործողության (փորձաքննության համար նմուշ ստանալու) միջոցով: Եթե նմուշն ստացվում է քննչական գործողության ընթացքում, ապա ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված կարգը կիրառելի չէ: Այս պարագայում ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված նմուշ ստանալու կարգն ըստ էության «կլանվում է» քննչական գործողության կատարման կարգի մեջ (կամ փոխարինվում է քննչական գործողության կատարման կարգով): Ընդ որում՝ Օրենսդիրը պահանջում է ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված կարգով նմուշ ստանալիս պահպանել քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները: Օրինակ՝ եթե քննիչը քնակարանի խուզարկության ընթացքում որոշում է վերցնել նաև մեղադրյալի նոթատետրը՝ որպես ձեռագրի նմուշ այն փորձաքննության ժամանակ օգտագործելու համար, ապա այս պարագայում քննիչը չպետք է կայացնի փորձաքննության համար ձեռագրի նմուշ ստանալու մասին առանձին որոշում և արձանագրություն (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասեր): Այս իրավիճակում խուզարկություն կատարելու կարգը կլանում (կամ փոխարինում) է նմուշ ստանալու կարգին:

Այս տեսանկյունից խիստ ձևականացված է թվում այն մոտեցումը՝ ըստ որի, «անկախ նրանից, թե նմուշն ինչպես է ձեռք բերվում, դրա համար պետք է կայացվի առանձին որոշում»<sup>16</sup>: Եթե հետևենք այս տրամաբանությանը, ապա խուզարկության ընթացքում կամ փորձաքննություն կատարելու ընթացքում նմուշ վերցնելիս քննիչը պետք է կայացնի նմուշ ստանալու մասին առանձին որոշում և կազմի նմուշ ստանալու մասին արձանագրություն, անձին ստորագրությամբ ծանոթացնի նմուշ ստանալու մասին որոշմանը և բացատրի նրա

---

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց: Եր.: Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 380:

իրավունքներն ու պարտականությունները, ինչը քրեական վարույթի ինքնանպատակ ձևականացման դրսևորում է:

Հաջորդիվ կներկայցվի ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածով սահմանված նմուշ ստանալու կարգը:

4.2. *Նմուշ ստանալու ընթացակարգը:* Եթե քննիչը նմուշ ստանում է քննչական գործողության կամ փորձաքննության ընթացքից դուրս, ապա պետք է նախ կայացնի փորձաքննության համար նմուշ ստանալու մասին որոշում: Այդ որոշման մեջ պետք է նշվեն՝ 1) նմուշ ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը. 2) եթե նմուշն ստացվում է անձից՝ ապա նրա անունը, ազգանունը և կարգավիճակը. 3) եթե նմուշն ստացվում է նյութից կամ այլ օբյեկտից՝ ապա դրա գտնվելու վայրը և դրա մասին այլ վերաբերելի տվյալներ. 4) ստացման ենթակա նմուշի տեսակը, չափը կամ քանակը. 5) եթե նմուշն ստացվում է անձից՝ ապա նմուշ հանձնելու համար նրա ներկայանալու տեղը և ժամանակը. 6) նմուշն ստանալու նպատակը (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 3-րդ մաս):

Քննիչն անձին հրավիրում է իր մոտ կամ վերջինիս ներկայանալու անհնարինության դեպքում գնում է նրա գտնվելու վայրը, ստորագրությամբ ծանոթացնում է նրան նմուշ ստանալու մասին որոշմանը և բացատրում նրա իրավունքներն ու պարտականությունները (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 4-րդ մաս):

Նմուշի ստացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները քննիչը կատարում է համապատասխան բնագավառի ձեռնհաս փորձագետի մասնակցությամբ (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 5-րդ մաս):

Փորձաքննության համար նմուշ ստանալու մասին արձանագրությունում, ՀՀ քր. դատ. օր-ի 215-րդ հոդվածով (քննչական գործողության արձանագրությունը) նախատեսված տվյալները նշելուց բացի, քննիչը կամ փորձագետը նկարագրում է նաև ստացված նմուշները: Ստացված նմուշները պատշաճ փաթեթավորվում են, կնքվում և կցվում են արձանագրությանը (ՀՀ քր. դատ. օր-ի 254-րդ հոդվածի 7-րդ մաս):

---

## ПОЛУЧЕНИЕ ОБРАЗЦА ДЛЯ ЭКСПЕРТИЗЫ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**Гамбарян Артур Сиреканович**

Заведующий кафедрой теории права и конституционного права

Российско-Армянского (Славянского) университета,

д.ю.н., профессор, заслуженный юрист РА

---

**Аннотация.** В данной статье комплексно анализируются уголовно-процессуальное значение и особенности института получения образцов в контексте уголовно-процессуального законодательства Республики Армения. Кроме прочего, автор представляет характеристику образца, его признаки, виды и доктринальную классификацию.

В статье представлена система общественных отношений, регулируемая статьей 254 УПК РА, с акцентом на особенности соотношения и различия между образцом для экспертизы и вещественным доказательством.

В контексте указанного автор раскрывает место и роль получения образцов в системе доказательственных действий, а также представляет процессуальный порядок получения образцов и его специфику, обязанность участников процесса предоставлять образцы, последствия невыполнения этой обязанности, а в частности, особенности и возможные пути принудительного получения образцов.

**Ключевые слова:** образец, вещественное доказательство, экспертиза, следственное действие, следователь, эксперт.

---

# OBTAINING A SAMPLE FOR EXAMINATION IN CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA

**Artur Sirekan Ghambaryan**

*Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law of  
Russian-Armenian University, Honored Lawyer of the Republic of Armenia,  
Doctor of Juridical Sciences, Professor*

---

**Abstract.** The article conducts an in-depth analysis of the institution of obtaining samples within the framework of the Armenian criminal procedure. The author examines in detail what a sample is, what types of samples exist, what their characteristics are, and their doctrinal classification as well.

The legal framework governing the obtaining of samples is analyzed, in particular, Article 254 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia. Particular attention is paid to the relationship between the sample for examination and physical evidence, as well as their distinctive features.

In the context of the above, the author reveals the place and role of obtaining samples in the system of evidentiary actions. The procedural order for obtaining samples is described in detail, including the obligation of the participants in the proceedings to provide samples and the possible consequences of failure to fulfill this obligation. The issues of obtaining samples by force, including their legal grounds and the procedure for their conduct, are also considered.

**Keywords:** sample, physical evidence, expertise, investigative action, investigator, expert.

Հոդվածը գրախոսվել է՝  
Ներկայացվել է Կրկագրության՝

